ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » հունիս 2021թ. N 75 Ա

ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 786-Ն որոշումը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի հունիսի 9-ի թիվ 74-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կազմած եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 786-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզին տրամադրվող «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածից 32 000 000 (երեսուներկու միլիոն) ՀՀ դրամ ընթացիկ դրամաշնորհից 29 000 000 (քսանինը միլիոն) ՀՀ դրամը, ըստ հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատանքային խմբի կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա մարզում առաջնահերթ հիմնախնդիրները բացահայտելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված հիմնավորումների, առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով հատկացնել մարզի թվով 8 (ութ) հանրակրթական ուսումնական հաստատության՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ կազմակերպել ընթացիկ դրամաշնորհի պայմանագիր կնքելու աշխատանքները:

3. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը, ըստ կնքված պայմանագրերի, ապահովել որոշման պահանջների կատարումը:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

15.06.2021

X

ՆԱՆԵ ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ. հունիսի 15-ի թիվ 75-Ա որոշման

N	Դրամաշնորհ ստացող կազմակերպություններ	Դրամաշնորհի տրամադրման նպատակը	Գումարը (հազ. դրամներով)
1.	ՀՀ Վայոց ձորի մարզի «Ջառիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	դպրոցի ջրահեռացման համակարգի և սանհանգույցների վերանորոգում	3.000.0
2.	«ՀՀ Վայոց ձորի մարզի Արփիի Վ. Լևոնյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ	մարզադահլիճի, 2 սանհանգույցի ու հանդերձարանի հիմնանորոգում	3.000.0
3.	«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ	կաթսայատան գազատարի միացում և ջեռուցման համակարգի կարգավորում	2.000.0
4.	ՀՀ Վայոց ձորի մարզի «Մարտիրոսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	շենքի պատուհանները փոխելու նպատակով	5.000.0
5.	«ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	վառելիքի ձեռք բերում	4.000.0
6.	«ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	հանդիսությունների դահլիճի վերանորոգում և պատուհանների փոխում	7.000.0
7.	«ՀՀ Վայոց մարզի Ազատեկի միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ	դպրոցի ջրահեռացման համակարգի և սանհանգույցի նորոգում	2.000.0
8.	«Վայոց ձորի մարզի Աղնջաձորի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ	մարզադահլիճի վերանորոգում	3.000.0